Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը քոլեջի ուսանողների համար

Արդյո՞ք շատ բացասական կլինի իմ կողմից մարդահամարը չլրացնելու հետևանքը:

Եթե Los Angeles-ում երիտասարդ չափահասները մարդահամար չանցնեն Cal և Pell դրամաշնորհների դաշնային ֆինանսավորման չափը կարող է նվազել: Սա կարող է լուրջ ազդեցություն ունենալ մեր քաղաքի քոլեջի այն ուսանողների վրա, որոնք օգնության կարիք ունեն իրենց բարձրագույն կրթության ֆինանսավորման համար:

Միջազգային ուսանողները պե՞տք է ստիպված լինեն լրացնել մարդահամարը:

Այո, ԱՄՆ-ում ապող յուրաքանչյուր անձ, այդ թվում միջազգային քոլեջի և համալսարանի ուսանողները պետք է հաշվառվեն որպես տասնամյակի մարդահամարի մի մաս: Միջազգային ուսանողները (անկախ քաղաքացիության կարգավիճակից) պետք է հաշվառվեն այնտեղ, որտեղ հիմնականում ապրում են 2020թ. ապրիլի 1-ին կամ դրանից առաջ (Մարդահամարի օր):



Ինչպե՞ս կարող եմ համոզված լինել, որ ես էլ եմ անցնում մարդահամարը:

Դուք պետք է մարդահամար անցնեք այնտեղ որտեղ հիմնականում ապրում եք 2020թ. ապրիլի 1-ին կամ դրանից առաջ (Մարդահամարի օր):

Եթե ապրում եք ուսանողական հանրակացարանում պետք է հաշվառվեք որպես քոլեջի մարդահամարի մի մաս (նույնիսկ եթե ընդմիջման կամ արձակուրդի եք):

Եթե մենակ եք ապրում (ոչ ուսանողների պետական հանրակացարանում) պետք է հաշվառեք ձեզ և ձեր ընտանիքում ցանկացածին: Յուրաքանչյուր ընտանիքի համար միայն մեկ հարցաթերթիկ կարող է ներկայացվել:

Եթե ապրում եք ձեր ծնողների հետ, համոզվեք, որ նրանք ձեզ հաշվառում են իրենց ուսումնասիրության մեջ:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census

Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը ընտանիքների համար

Արդյո՞ք շատ բացասական կլինի իմ կողմից մարդահամարը չլրացնելու հետևանքը:

Ամեն տարի մոտ 115 միլիարդ դոլար է ծախսվում California-ի դպրոցների, առողջապահության, բնակարանային պայմանների երաշխավորման, փոխադրման և մարդահամարի տվյալներով սահմանված այլ կենսական կարևորության ծրագրերի վրա:

2010թ. մոտ 74,000 երեխա մարդահամար չէր անցել Los Angeles-ի շրջանում: Ոչ ճշգրիտ մարդահամարը վատ է անդրադառնում այն ծրագրերի ֆինանսավորման վրա, որոնք նախատեսված են փոքր երեխաների համար, այդ թվում Head Start-ը, Երեխաների բժշկական ապահովագրության ծրագիրը (ԵԲԱԾ), Լրացուցիչ սննդի աջակցության ծրագիր (ԼՍԱԾ, ուտելիքի կտրոններ) և Դպրոցի լանչի ազգային ծրագիրը: Այսօրվա ձեր գործողությունները կունենան իրենց ազդեցությունը ձեր երեխաների և նրանց ապագայի վրա: Կատարեք ձեր բաժին պարտականությունը՝ երաշխավորելու, որ ձեր ընտանիքում ցանկացածը մարդահամարն անցնի:

Ո՞վ պետք է մարդահամար անցնի:

Հիմնականում ձեր հասցեում (այդ թվում ձեր սեփականությունում առկա ավտոտնակում կամ անիվների վրա տանը) մնացող կամ ապրող յուրաքանչյուր անձ պետք է մարդահամար անցնի՝ անկախ տարիքից: Հաշվառե՛ք բոլոր երեխաներին, այդ թվում նորածիններին ու մինչև 1 տարեկան երեխաներին, նույնիսկ եթե նրանք դեռ հիվանդանոցում են 2020թ ապրիլի 1-ին (Մարդահամարի օր): Այն երեխաները, որոնք տարվա ընթացքում իրենց ժամանակն անց են կացնում երկու տներում պետք է մարդահամար անցնեն այն ընտանիքում, որտեղ ապրում են 2020թ. ապրիլի 1-ի դրությամբ: Հիշեցրե՛ք ձեր ընտանիքում մարդահամարի հարցաթերթիկը լրացնող անձին հաշվառել բոլոր երեխաներին:

Ո՞ր հարցերն են ներառված լինելու մարդահամարում:

Հարցաթերթիկում պահանջվում է հետևյալ տեղեկությունները յուրաքանչյուր անձի վերաբերյալ.

- տարիք
- ծննդյան օրը
- Իսպանական կամ Լատինական ծագումը
- ռասսա
- հարաբերությունները ընտանիքի ղեկավարի հետ
- սեռը
- վարձակալ կամ տան տեր
- այլ հարցեր (ինչպես օրինակ յուրաքանչյուրի անունը և տան հեռախոսահամարը)

Հարցաշարը լրացնելու համար պահանջվում է մոտ 10 րոպե, բայց ավելի շատ ժամանակ կարող է պահանջվել, եթե ձեր ընտանիքում բազմաթիվ մարդիկ են ապրում:



Ձեզնից չեն պահանջի տրամադրել ձեր ընտանիքում որևէ մեկի Հանրային ծառայության համարանիշը կամ ներգաղթի կարգավիճակը:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census

Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը ներգաղթյալների համար

Ինչպե՞ս է մարդահամարն ազդելու ընտանիքիս և իմ վրա:

Լոս Անջելես քաղաքում մոտ 1.5 միլիոն ներգաղթյալներ կան: Եթե ներգաղթյալները մարդահամար չանցնեն Լ.Ա.-ն կարող է կորցնել այն ճգնաժամային ծրագրերի, այդ թվում Head Start-ի, Երեխաների բժշկական ապահովագրության ծրագրի (CHIP), Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրի (SNAP, ուտելիքի կտրոններ) և Դպրոցի ճաշի ազգային ծրագրի ֆինանսավորումը, որոնց վրա իրենց հույսն են դնում ներգաղթյալ շատ ընտանիքներ:

Ձեր 2020թ. մարդահամարի տեղեկությունները պաշտպանված են:

2020թ. մարդահամարի համար U.S. Մարդահամարի բյուրոն առաջարկում է առցանց լրացնել հարցաշարը: Հոգ չէ, հարցաշարը լրացնում եք առցանց, թե թղթային դիմումի ձևով, ձեր անձնական տեղեկությունների պաշտպանությունը շատ կարևոր է: Օրենքով ձեր անձնական տեղեկությունները չեն կարող ձեր դեմ օգտագործվել և U.S. Մարդահամարի բյուրոն անվտանգության միջոցառումներ է ձեռնարկել՝ երաշխավորելու գործընթացի անվտանգությունը և ընթացքի ցանկացած քայլը:

Իմ տեղեկություններն անվտա՞նգ կլինեն: Դրանք կարո՞ղ են իմ կամ իմ ընտանիքի դեմ օգտագործվել:

Կիբերանվտանգության մակարդակի բարձրացման մասին 2015 թվականի դաշնային ակտը երաշխավորում է ձեր տվյալների պաշտպանությունը կիբերանվտանգության արտաքին վտանգներից: Ձեր անունը, հասցեն և հեռախոսահամարը երբևէ չեն բացահայտվի կամ հրապարակվի: Ավելին, U.S. Մարդահամարի բյուրոյին չի թույլատրվում ձեր դեմ օգտագործել ձեր կողմից տրամադրված տեղեկությունները: U.S. օրենսգրքի 13-րդ հոդվածն արգելում է Մարդահամարի բյուրոյին տարածել ճանաչելի տեղեկություններ, որոնք դուք որևէ պատճառով հայտնել եք ցանկացած այլ կառավարական գործակալության կամ պաշտոնյայի (այդ թվում՝ ներգաղթի հարցերով զբաղվող պաշտոնյաների կամ որևէ իրավապահ գործակալության), արտաքին կազմակերպության կամ դատարանի:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census

Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը Los Angeles-ի միացյալ դպրոցական շրջանի ուսանողների ընտանիքների համար

Ինչպե՞ս է Մարդահամարն անդրադառնալու LAUSD ուսանողների և նրանց ընտանիքների վրա:

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը (LAUSD) երկրի երկրորդ ամենամեծ դպրոցական շրջանն է, որն ունի մոտ 694,096 K-12 ծրագրով սովորող մանկահասակ երեխաներ և ավագ ուսանողների կրթություն: Կարևոր է, որ ուսանողներն ու իրենց ընտանիքները մարդահամար անցնեն՝ երաշխավորելու, որ քաղաքը ստանա Head Start-ի, հատուկ կրթության, Լրացուցիչ կրթական դասընթացների դրամաշնորհների նման ճգնաժամային կրթական ծրագրերի դաշնային ֆինանսավորման իր բաժինը ցածր եկամուտ ունեցող համայնքների դպրոցների և դպրոցական ճաշերի համար:

Ե՞րբ և ինչպե՞ս պետք է պատասխանեմ Մարդահամարի հարցաթերթիկին:

2020թ սկզբներին ձեր տուն ծանուցում կուղարկվի, որում կլինեն ցուցումներ այն մասին, թե ինչպես պետք է առցանց լրացնել մարդահամարի հարցաթերթիկը: Մարդահամարի օրը 2020թ. ապրիլի 1-ն է: Դուք կարող եք նաև լրացնել հարցաթերթիկը՝ զանգահարելով անվճար հեռախոսահամարին, լրացնելով թղթային հարցաթերթիկը, որը էլ. փոստով կուղարկվի ձեր տուն առցանց չպատասխանելու դեպքում կամ սպասել, որ մարդահամար անցկացնողը թակի ձեր դուռը: Եթե տանը համացանցի հասանելիություն չունեք, կարող եք գնալ Los Angeles քաղաքի և շրջանի դպրոցներում և այլ վայրերում գտնվող հարյուրավոր Մարդահամարի գործողությունների կենտրոններից մեկը:

Կարո՞ղ եմ հարցաթերթիկը լրացնել իմ մայրենի լեզվով:

Հարցաթերթիկը (և անվճար հեռախոսահամարին զանգահարելու տարբերակը) հասանելի կլինի առցանց անգլերենով և 12 հավելյալ լեզվով (Իսպաներեն, չինարեն, վիետնամերեն, կորեերեն, ռուսերեն, արաբերեն, թագալերեն, լեհերեն, ֆրանսերեն, Հայիթիի կրեոլերեն, պորտուգալերեն և ճապոներեն): Թղթային հարցաթերթիկը հասանելի կլինի միայն անգլերենով և իսպաներենով: Ինչևէ, U.S. Մարդահամարի Բյուրոն կունենա 59 ոչ անգլերեն լեզվով բառարաններ և ուղեցույցներ:

Կարո՞ղ եմ Մարդահամարի մասին ավելի շատ տեղեկություններ ստանալ երեխայիս դպրոցից:

2019թ.-ին որպես իրենց քարոզարշավի մի մաս LAUSD-ն կանցկացնի մարդահամարի մասին սեմինարներ ընտանիքների համար. Մենք մեկ միասնական L.A. ենք. Կանգնած ենք ներգաղթյալ ընտանիքների կողքին: Իրենց այլ առկա որոշ ծրագրերի շրջանակներում LAUSD-ն նաև բազմաթիվ լեզուներով կներկայացնի մարդահամարի մասին տեղեկություններ ծնողների և ուսանողների համար:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census

Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը LGBTQI համայնքի համար

Ինչո՞ւ պետք է մասնակցեմ մարդահամարին:

Լոս Անջելսում են մարդկանց այն ամենամեծ տոկոսները, որոնք ճանաչում են իրենց որպես Լոս Անջելեսում LGBTQI համայնքի անդամ: Եթե LGBTQI համայնքը ճշգրիտ ձևով մարդահամար չանցնեն, ավելի քիչ գումար կստացվի ճգնաժամային ծառայությունների և ծրագրերի համար, որոնք նախատեսված են LGBTQI համայնքի համար, այդ թվում համայնքի բժշկական կենտրոնները, խնամատարները և անօթևաններին տրամադրված ծառայությունները: Դուք կարևոր եք և պետք է մարդահամար անցնեք:

Ի՞նչ է մարդահամարը հարցնում սեռի և սեռական կողմնորոշման մասին:

Մարդահամարի հարցաթերթիկն ընդգրկում է ուղղակի տրված հարց, որով որոշվում է ընտանիքում ցանկացած անձի սեռը, բայց այն չի ներառում հարցեր գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման մասին: Առաջին անգամ նույն ընտանիքում ապրող զույգին տրվում է հարց այն մասին, թե արդյո՞ք նրանք նույն, թե տարբեր սեռի են, ամուսնացած, թե՝ չամուսնացած են, այր ու կին /զուգընկերներ են:

Ո՞վ պետք է մարդահամար անցնի:

Անկախ իրենց տարիքից, հարաբերությունների կամ քաղաքացիության և ներգաղթյալ լինելու կարգավիճակից, յուրաքանչյուրը, ով ապրում է ձեր ընտանիքում, այդ թվում նույն կամ տարբեր սեռի զուգընկերները, խնամարկյալները, որդեգրված երեխաները և բոլորն ովքեր հիմնականում այդտեղ են ապրում 2020թ. ապրիլի 1-ի (Մարդահամարի օր) դրությամբ պետք է մարդահամար անցնեն:

Ի՞նչ կլինի եթե ես չպատասխանեմ կամ չկարողանամ պատասխանել հարցաթերթիկի բոլոր հարցերին:

Այնուամենայնիվ դուք անցնելու եք մարդահամարը նույնիսկ եթե չպատասխանեք կամ չկարողանաք պատասխանել բոլոր հարցերին: Ինչևէ, մենք հորդորում ենք ձեզ հնարավորինս ճշգրիտ ձևով պատասխանել բոլոր հարցերին, որպեսզի երաշխավորեք ձեր տվյալների ճշտությունը: Երբ հարցերը անպատասխան են մնում U.S. Մարդահամարի Բյուրոն փորձում է լրացնել ձեր կողմից բաց թողնված տեղեկությունը երկրորդային վարչական կամ երրորդ կողմ աղբյուրներից ստացված տվյալներով:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census

CA CENSUS 2020 BE COUNTED, LOS ANGELES

Մարդահամար CALIFORNIA ALL 2020

Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը վարձակալների համար

Ինչպիսի՞ դեր է խաղում մարդահամարը վարձակալների համար:

Վարձակալները մտնում են մարդահամարի տեսանկյունից ամենախնդրահարույց բնակչության մեջ: Միայն Los Angeles քաղաքում, հաշվված 4 միլիոն բնակիչների մոտ կեսը (63%) ապրում են վարձակալական հիմունքներով զբաղեցված բնակարանային միավորներում: Կարևոր է, եթե L.A. քաղաքի բոլոր վարձակալները մարդահամար են անցնում՝ երաշխավորելու, որ քաղաքը ստանա իր արդարացի բաժինն այն ծրագրերի, այդ թվում Բաժին 8 Բնակարանային ընտրության վաուչերների և Օժանդակ վճարումների ծրագրերի, Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրի (SNAP) և տեղային համայնքի բժշկական կենտրոնների դաշնային ֆինանսավորումից, որոնք հոգուտ վարձակալների են:

Իմ տան տերը լիազորվա՞ծ է իմ մասին տեղեկություններ տրամադրել մարդահամար անցկացնող աշխատակցին:

Եթե մարդահամար անցկացնող աշխատակիցը ընդունակ չէ ձեզնից ստանալ հարցաթերթիկի հարցերի պատասխանները նրանից պահանջվում է կապ հաստատել ձեր կողմից վարձակալված զույգի տիրոջ և մենեջերի հետ անհրաժեշտ տեղեկությունները ստանալու համար: Սա կարող է հանգեցնել թերի մարդահամարին, քանի որ տան տերերը կարող են չիմանալ իրենց կողմից վարձակալության հանձնված տարածքներում ապրող մարդկանց և ընտանիքների թիվը:

Ին ընտանիքից ո՞վ պետք է մարդահամար անցնի:

Կարևոր է, որ ձեր հասցեում (այդ թվում ձեր բնակարանում կամ տանը, ավտոտնակում, կամ ձեր սեփականության վրա գտնվող անիվների վրա տանը) ապրող կամ մնացող յուրաքանչյուր անձ մարդահամար անցնի 2020թ. ապրիլի 1-ին: Այդ շարքը ներառում է նաև նորածիններին, երեխաներին, չափահասներին և մեծահասակներին ու այն մարդկանց, որոնք ձեզ հետ կապ չունեն: U.S. Մարդահամարի բյուրոն յուրաքանչյուր ընտանիքի համար ընդունելու է միայն մեկ հարցաթերթիկ, այնպես որ շատ կարևոր է, որ առաջին անգամ բոլորը մարդահամարը ճիշտ անցնեն:

Դաշնային կառավարությունից որևէ մեկն ուղարկվելո՞ւ է մեր տուն:

Մարդահամար անցկացնողները գալու են ձեր տուն միայն այն դեպքում, եթե ձեր ընտանիքից ոչ ոք չպատասխանի հարցմանը մինչև 2020թ. ապրիլի վերջը: Այդ դեպքում մարդահամար անցկացնողները ձեզնից կխնդրեն անձամբ լրացնել հարցաշարը: Ինչևէ, սովորաբար մարդահամար անցկացնողները դժվարությունների են բախվում բազմաբնակարան շենքեր մուտք ունենալիս, և այդ իսկ պատճառով շատ վարձակալներ մարդահամար չեն անցնում: Որպեսզի ոչ ոք ձեր տուն չգա, դուք պետք է լրացնեք մարդահամարի հարցաշարը փոստով ծանուցում ստանալուն պես:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census

Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը Անօթևան մարդկանց աջակցության ծառայություններ տրամադրողների համար

Ինչպե՞ս է մարդահամարն անդրադառնում անօթևան մարդկանց վրա:

Los Angeles-ի անօթևանների ծառայությունների մարմնի կողմից անցկացված 2019թ. Los Angeles-ի անօթևանների լայնածավալ մարդահամարի համաձայն Los Angeles-ի քաղաքում մոտ 36,000 անօթևան անձինք և ընտանիքներ կան: Այս անձանց թերի մարդահամարը կարող է հանգեցնել միլիարդավոր դոլարների կորստի դաշնային ֆինանսավորմամբ ծրագրերի դեպքում, որոնք նպաստում են վերջինիս, այդ թվում Բաժին 8 Բնակարանային ընտրության վաուչերների ծրագիրն, առողջապահություն անօթևանների համար ծրագիրը և տանից փախած ու անօթևան երիտասարդների ծրագրերը:

Ինչպե՞ս կարող են անօթևաններին ծառայություն մատուցողներն օգնել երաշխավորելու մարդահամարի ճշգրտությունը:

Շատ կարևոր է, որ L.A. անօթևան բնակչությունը ճշգրիտ մարդահամար անցնի՝ երաշխավորելու կենսական կարևորություն ունեցող ծառայությունների համար ֆինանսավորման մեր արդարացի բաժինը: Աշխատեք ձեր տեղական Ամբողջական մարդահամարի հանձնաժողովի և ԱՄՆ Մարդահամարի բյուրոյի գրասենյակի հետ՝ մշակելու ազդեցիկ տեղեկատվական ռազմավարություններ և ճանաչելու այն տեղադիրքերը, որտեղ բնակվում են մարդիկ:

Ինչպե՞ս է U.S. Մարդահամարի բյուրոն հաշվառելու անօթևաններին:

Ծառայության վրա հիմված հաշվարկ
(2020թ. մարտի 30 - ապրիլի 1)
Հաշվառել մարդկանց այն վայրերում, որտեղ վերջիններս ծառայություններ են ստանում (այդ թվում ապաստանները և անվճար ճաշարանը) և բացօթյա վայրեր ինչպիսիք են ճամբարները:

Հաշվարկ տարանցիկ վայրերում
(2020թ. ապրիլի 9 - մայիսի 4)
Հաշվառել այն մարդկանց, որոնք չունեն կայուն տուն տարանցիկ վայրերում, ինչպիսիք են հյուրանոցներն ու մոթելները:

Մարդահամարի հարցաթերթիկի հարցը
Պատասխանողներին խնդրեք ներառել ցանկացածին, որը ժամանակավոր մնում է իրենց տանը, որը կարող էր հաշվառված չլինել որպես ընտանիքի մի մաս:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝
DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org
#2020Census

Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը ձեռնարկատերերի համար

Ի՞նչ կապ կա մարդահամարի և ձեռնարկատերերի միջև:

Ամեն 5 տարին մեկ անգամ U.S. Մարդահամարի բյուրոն իրականացնում է Տնտեսական մարդահամար: Հավաքագրված տեղեկություններն օգնում են ներկայիս և հեռանկարային ձեռնարկատերերին տեղեկությունների վրա հիմված որոշումներ կայացնել ամեն ինչի մասին՝ սկսած նրանից, թե որտեղ հիմնել և ընդլայնել բիզնեսը մինչև աշխատողներին իրենց կողմից վճարված աշխատավարձերը: Սա օգնում է տեղական կառավարման մարմիններին չափել իրենց շրջանի տնտեսական կատարողականը: Մարդահամարի տվյալները նաև դաշնային ֆինանսավորում է ձեռք բերում ենթակառուցվածքային բարելավումների և տրանսպորտային նախագծերի համար՝ հիմնահարցեր, որոնք ուղղակի կապված են տնտեսական զարգացման և կյանքի որակի հետ, որոնք ազդում են բիզնեսների և աշխատանքների ստեղծման վրա:

Ի՞նչ պետք է ասեմ աշխատողներիս մարդահամարի մասին:

Դուք պետք է ձեր աշխատողներին հորդորեք անցնել մարդահամարն ու հաշվառվել: Եթե մարդիկ չեն մասնակցում, առանցքային տեղեկություններն ու դաշնային ֆինանսավորումը համաձայնեցվում են: Ձեռնարկատերերը չեն ունենա ճշգրիտ տվյալներ, որոնք կարող են օգտագործվել որոշելու բիզնես հիմնելու համար հարմար վայրը կամ հնարավոր հաճախորդների ժողովրդագրական տվյալները: Տեղական գործակալությունները չեն ունենա ամբողջական պատկեր այն մասին, թե ինչպես է գործում տեղական տնտեսությունը: Եվ դաշնային կառավարությունը կարող է շրջանցել ձեր համայնքի բարեփոխումները:

Ինչպե՞ս կարող են բիզնեսը, առևտրային պալատը և այլ խմբերը նպաստել մարդահամարի տեղեկատվական ջանքերին:

Դարձե՛ք Մարդահամարի Բարի Կամքի Դեսպան, որպեսզի պալատի անդամներին և հաճախորդներին տեղեկացնեք մարդահամարի կարևորության մասին: Մտածե՛ք ձեր գրասենյակում Մարդահամարի գործողությունների կենտրոն կամ այն աշխատողների համար ընդմիջման սենյակ բացելու մասին, որոնց համացանցը մշտապես հասանելի չէ: Ընդգրկե՛ք 2020թ. մարդահամարի հաղորդագրությունները ծրագրերում, ծառայություններում, պարբերաթերթերում և վեբկայքերում:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census

Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը հաշմանդամություն ունեցող անձանց համար

Ինչո՞ւ է մարդահամարը կարևոր հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:

ԱՄՆ Մարդահամարի բյուրոյի կողմից անցկացված 2018թ. բնակչության հաշվարկների համաձայն 2013-2017թթ. մինչև 65 տարեկան լոսանջելեսցիների 6.3%-ի մոտ հաշմանդամություն էր գրանցվել:

Նրանց, ովքեր խուլ են կամ դժվար են լսում, կույր են կամ ունեն ճանաչողական այլ խանգարումներ պետք է այցելել և հաշվառել: Յուրաքանչյուր ոք, անկախ հաշմանդամությունից կրում է ոչ ճշգրիտ մարդահամարի բացասական ազդեցությունը: Առողջապահության, անվտանգության ցանցային ծրագրերի և քաղաքական ներկայացուցչության համար դաշնային ֆինանսավորումը համապատասխանեցվում է, երբ բոլորը չեն մասնակցում մարդահամարին:

Մարդահամարի հարցաշարը հասանելի՞ է նրանց համար ովքեր որոշակի խանգարումներ ունեն:

Նրանք, ովքեր չեն կարողանում առցանց ներկայացնել հարցաթերթիկը, կարող են կա՛մ զանգահարել մարդահամարի թեժ գիծ՝ հարցաթերթիկը լրացնելու համար, կա՛մ վերցնել մարդահամարի հաշվարկի թղթային հարցաթերթիկը: Մարդահամարի բարի կամքի դեսպանները և Ամբողջական մարդահամարի հանձնաժողովները կհամագործակցեն համայնքային կազմակերպությունների հետ, որպեսզի հաղորդակցվեն այն անձանց հետ, որոնք կարող են խոսքի, լեզվի, տեսողական կամ այլ տեսակի խանգարումներ ունենալ և կարող են օգնության կարիքն ունենալ հարցաթերթիկը լրացնելու պարագայում: Բացի այդ, մարդահամարի բյուրոն կտրամադրի լեզվի բառարաններ և տեսանյութեր, ինչպես նաև տպագիր ուղեցույցներ, որոնք հասանելի կլինեն 59 ոչ անգլերեն լեզուներով, այդ թվում՝ ամերիկյան նշանների լեզու, Բրեյլի գրեր և մեծ տպագիր:

Արդյո՞ք հարցաթերթիկը հասանելի կլինի այն մարդկանց համար, որոնք անգլերեն չեն խոսում:

Այո: Առցանց, հարցաթերթիկը հասանելի կլինի այս 12 լեզուներով՝ իսպաներեն, չինարեն (պարզեցված), վիետնամերեն, կորեերեն, ռուսերեն, արաբերեն, թագալերեն, լեհերեն, ֆրանսերեն, Հայիթիի կրեոլերեն, պորտուգալերեն և ճապոներեն: Մարդահամարի թեժ գիծը նաև օգնություն կտրամադրի այդ լեզուներով և խուլերի համար նախատեսված հեռահաղորդակցման սարքի միջոցով:

Թղթային հարցաթերթիկները հասանելի կլինեն անգլերենով և իսպաներենով:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census

Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը Առողջապահական ծառայություններ մատուցողների համար

Ինչու՞ է մարդահամարը կարևոր առողջապահական ծառայություններ մատուցողների համար:

Կլինիկաները, առողջության ապահովագրական ընկերությունները, տեղական կառավարությունները և համալսարանները հիմնվում են մարդահամարի տվյալների վրա՝ քաղաքականությունների, համայնքի կարիքների գնահատման և այլնի վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու համար:

Բնակչության 2018 թվականի մարդահամարի հաշվարկների համաձայն՝ Լոս Անջելեսի 65 տարեկանից ցածր բնակչության 17.2% -ն ապահովագրված չէ: Մարդահամարի տվյալներից ստացված տեղեկություններն օգնում են ֆինանսավորել այնպիսի կարևոր ծրագրեր, ինչպիսիք են Մեդիքեյդ, Մեդիքեյեր մաս Բ, Կանանց, նորածինների և երեխաների համար լրացուցիչ սնուցման ծրագիր (WIC), Երեխաների առողջության ապահովագրության ծրագիր (CHIP), առողջապահական կենտրոններ, և ավելին: Կալիֆորնիայում (2010 թվականի մարդահամարի տվյալների համաձայն, "Counting for Dollars 2020"), միայն Մեդիքեյդին տրամադրվել է ավելի քան 55 միլիարդ դոլար:

Ինչպե՞ս են հաշվում հիվանդանոցների կամ ինտերնատների հիվանդներին:

Բոլորին պետք է հաշվել, այնտեղ որտեղ նրանք ապրում են կամ քնում ժամանակի մեծ մասը 2020 թվականի ապրիլի 1-ի դրությամբ (Մարդահամարի օրը) կամ մինչ այդ: Հիվանդանոցներն ու ինտերնատները համարվում են խմբային կացարաններ: 2020 թվականի սկզբին U.S. Մարդահամարի բյուրոյի ներկայացուցիչները կհաղորդակցվեն ձեր ղեկավարության հետ՝ հասկանալու, թե արդյոք ձեր հաստատությունը ծրագրում է ուղղակիորեն տվյալներ ներկայացնել Մարդահամարի բյուրոյին կամ արդյո՞ք նշանակված աշխատակիցները հիվանդներից կհավաքեն մարդահամարի հարցաթերթիկները:

Արդյո՞ք հարցաթերթիկը հասանելի կլինի այն հիվանդներին, որոնք անգլերեն չեն խոսում:

Այո: Առցանց, հարցաթերթիկը հասանելի կլինի այս 12 լեզուներով՝ իսպաներեն, չինարեն (պարզեցված), վիետնամերեն, կորեերեն, ռուսերեն, արաբերեն, թագալերեն, լեհերեն, ֆրանսերեն, Հայիթիի կրեոլերեն, պորտուգալերեն և ճապոներեն: Մարդահամարի թեժ գիծը նաև օգնություն կտրամադրի այդ լեզուներով և խուլերի համար նախատեսված հեռահաղորդակցման սարքի միջոցով:

Թղթային հարցաթերթիկները հասանելի կլինեն անգլերենով և իսպաներենով:

Լեզուների բառարանները և տեսանյութերը, ինչպես նաև տպագիր ուղեցույցները հասանելի կլինեն 59 ոչ անգլերեն լեզուներով, այդ թվում՝ ամերիկյան նշանների լեզու, Բրեյլի գրեր և մեծ տպագիր:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census